**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆինանսներ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 156

**№ 03/26-1/20305-2021**

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բրուտյան

Էլեկտրոնային աճուրդների համակարգի ծրագրային սպասարկման գործընթացում փոփոխություններ կատարելու հանգամանքով պայմանավորված առաջարկում ենք ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար աճուրդների միջոցով իրականացվելիք գնման ընթացակարգերը կազմակերպել գնման մրցակցային այլ ընթացակարգերի (գնանշման հարցում, բաց մրցույթ) միջոցով՝ անհրաժեշտության դեպքում գնումների պլանում կատարելով դրանից բխող փոփոխություններ:

Միաժամանակ հայտնում ենք, որ՝

- գնման ձևի փոփոխությունն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել նախատեսվող գնման տվյալ ձևի ընտրության համար գործող կարգավորումներով նախատեսված պայմանները.
- էլեկտրոնային աճուրդների համակարգով գնումների իրականացման ժամանակացույցի վերաբերյալ կտեղեկացնենք լրացուցիչ՝ դրա օգտագործման պայմանները կիրառելով այդ պահից սկսած կազմակերպվելիք գնման գործընթացների վրա:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X ________________ ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Կատարող՝ Ն. Մուրադյան
Հեռ. 011289328